ԱՆԳԼԵՐԵՆ

Հիմնական դպրոցի «Անգլերեն» առարկայից ավարտական քննության հարցատոմսի կառուցվածքը և գնահատման չափանիշները

Հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանի «Անգլերեն» առարկայից քննական հարցատոմսերի բովանդակությունը համապատասխանում է ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի «Անգլերեն» առարկայի առարկայական ծրագրերին և չափորոշիչներին:

Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք:

Առաջին առաջադրանքում տրվում է տեքստ (մինչև 200 բառ) և դրա վերաբերյալ 4 հարց: Աշակերտը պետք է բարձրաձայն կարդա տեքստը և կարողանա պատասխանել տեսքտի բովանդակությանը վերաբերող 4 հարցերին: Առաջադրանքը գնահատվում է 5 միավոր:

1 միավոր տրվում է սահուն կարդալու, ճիշտ արտասանության համար (նաև մինչև 4 արտասանական սխալի դեպքում) և 1-ական միավոր՝ յուրաքանչյուր ճիշտ պատասխանած հարցի համար:

Երկրորդ առաջադրանքում տրված են նախադասություններ, որոնցից դուրս բերված 5 բայերը պետք է դնել պահանջվող ժամանակաձևով: Առաջադրանքը կատարվում է գրավոր և գնահատվում է 5 միավոր:

Երրորդ առաջադրանքը թարգմանություն է հայերենից անգլերեն, որը կատարվում է գրավոր: Տրվում է 5 նախադասություն (մինչև 40 բառ):

Թարգմանությանը տրվում է 5 միավոր և գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

- **5 միավոր** տրվում է անթերի աշխատանքի համար:
- **4 միավոր** տրվում է այն դեպքում, եթե նախադասությունները ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 1-2 սխալ (ուղղագրական, բառագործածական կամ քերականական):
- **3 միավոր** տրվում է այն դեպքում, եթե նախադասությունները հիմնականում ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 3–4 (ուղղագրական, բառագործածական կամ քերականական) սխալ
- **2 միավոր** տրվում է այն դեպքում, եթե նախադասությունները գրեթե ճիշտ են թարգմանված, բայց թույլ է տրված 5-6 (ուղղագրական, բառագործածական կամ քերականական) սխալ
- **1 միավոր** տրվում է այն դեպքում, եթե նախադասություններում թույլ է տրված 7–8 (ուղղագրական, բառագործածական կամ քերականական) սխալ
- **միավոր չի տրվում**, եթե թույլ է տրված 9-ից ավելի ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ:

Չորրորդ առաջադրանքը ազատ զրույց է հետևյալ թեմաներից որևէ մեկի շուրջ:

1. My Native Town (Village)
2. The United Kingdom of Great Britain and Northern Ireland
3. London
4. The United States of America
5. Washington
6. My Family
7. My Flat
8. My Friend
9. My Hobby
10. My School
11. My Day
12. My Favourite Book
13. My Plans for the Future
14. My Summer Holidays
15. My Winter Holidays
16. Means of Communication
17. My Meals
18. Travelling
19. Shopping
20. Seasons and Weather

Պահանջվում է մտքեր արտահայտել տրված թեմայի շուրջ:

Չորրորդ առաջադրանքն ամբողջությամբ գնահատվում է 5 միավոր: Գնահատումը կատարվում է հետևյալ չափանիշներով:

- **5 միավոր** տրվում է, եթե պատասխանի բովանդակությունը լիովին համապատասխանում է թեմային և աշակերտը կարողանում է պատասխանել տրված հարցերին:
- **4 միավոր** տրվում է, եթե պատասխանի բովանդակությունը լիովին համապատասխանում է թեմային և աշակերտը կարողանում է պատասխանել ոչ բոլոր հարցերին:
- **3 միավոր** տրվում է, եթե օգտագործված բառապաշարը ընտրված է թեմային համապատասխան, սակայն կան աննշան վրիպումներ և աշակերտը չի կարողանում պատասխանել տրված հարցերին:
- **2 միավոր** տրվում է, եթե շարադրանքի բովանդակությունը մասամբ է համապատասխանում թեմային, նախադասությունների հիմնական մասը քերականորեն ճիշտ չի կառուցված:
- **1 միավոր** տրվում է, եթե շարադրանքի բովանդակությունը չի համապատասխանում թեմային, քերականական սխալների քանակը մեծ է:
- **միավոր չի տրվում** պատասխանի բացակայության դեպքում: